ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ,ք.Կապան Շահումյան 20/32, 3301:
Հեռ. (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200, **գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 9 ՀՈՒԼԻՍԻ 2019Թ.
№ 14 (504)

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Արմեն Սարգսյանը՝ «Մարիկա» ընկերությունում

Նախագահ Արմեն Սարգսյանը Սյունիքում

Սյունիքի մարզ կատարած աշխատանքային այցի ընթացքում հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանն այցելել է Մեղրիի ազատ տնտեսական գոտի (ԱՏԳ):

Նախագահը ծանոթացել է ստեղծված ենթակառուցվածքներին ու պայմաններին: Մեղրիի ԱՏԳ-ի տնօրեն Աշոտ Զարբաբյանը ներկայացրել է կատարված աշխատանքները, ընթացիկ իրավիճակն ու նախատեսվող անելիքները: Մասնավորապես նշվել է, որ առայժմ իրականացվել են միայն առաջին փուլով նախատեսվող աշխատանքները:

Նախագահ Սարգսյանն ասել է, որ օտարերկրյա ներդրողների եւ կազմակերպությունների ղեկավարների հետ իր բազմաթիվ հանդիպումների ընթացքում հետաքրքրություն է ցուցաբերվել նաեւ Մեղրիի ԱՏԳ-ի նկատմամբ, եւ այսօր ինքն այցելել է՝ անձամբ տեսնելու եւ ծանոթանալու ստեղծված պայմաններին ու հնարավորություններին: **«Մարդիկ տեղյակ են, որ Հայաստանում՝ Մեղրիում ազատ տնտեսական գոտի է ստեղծվում: Այդ մասին հարցնում են թե՛ արեւմտյան, թե՛ ռուսական ընկերությունները: Քանի որ փորձում եմ ներդրողներ հրավիրել Հայաստան, ինձ համար կարեւոր էր անձամբ տեսնել, որպեսզի հնարավորինս աջակցեմ՝ խորհրդակցելով կառավարության գործընկերների հետ»**,-ասել է նախագահը:

Նախագահ Արմեն Սարգսյանն այցելել է նաեւ Մեղրիի տարածաշրջանային բժշկական կենտրոն: Նա շրջայց է կատարել բուժհաստատությունում, ծանոթացել առկա պայմաններին, զրուցել անձնակազմի հետ, հետաքրքրվել կենտրոնի հագեցվածությամբ եւ խնդիրներով: Նախագահին տեղեկատվություն է ներկայացվել կենտրոնում մատուցվող ծառայությունների եւ դրանց հասանելիության ու որակի մասին:

էջ 2

... Եվ ինչպես երեխաները՝ ինչ էլ որ անեն, սիրում են մեղքը գցել ուրիշի վրա ու իրենց արդարացնել, որովհետեւ ինքնաքննադատության ուժն ու ճշմարտությունն ասելու գիտակցությունը չունին, էնպես էլ ամբոխներն ու ամբոխամիտ մարդիկ գտնում են մի շեյթան... ա՜, շեյթանն էր, թե չէ ինչպե՞ս կարելի էր, որ իրենցից էդպես բան դուրս գար...

Խաբում են իրենց, հանգստացնում են իրենց վրդովված խղճմտանքը ու գնում են դեպի նոր ընդհարումներ:

Ինչո՞ւ:

Որովհետեւ գնում են նույն հին ճանապարհով, նույն հին ձեւի պայքարներով, նույն հին երգերով...

Հովհաննես Թումանյան

Ավանդական դարձած թթի հերթական փառատոնը

Աշխարհի կենտրոնն ասես այդ օրը՝ հուլիսի 6-ին, Գորիս համայնքի Քարահունջ գյուղն էր: Այդտեղ ժամանած հյուրերը նաեւ Գերմանիայից էին, Ամերիկայից...

Ավանդույթ դարձած թթի հերթական փառատոնն է Քարահունջում: Երկնքից ասես մանանա է թափվում՝ սպիտակ թթի տեսքով...

- Թութ չի է, ոսկի է, ոսկի, - ասում է չուխա հագած քարահունջեցին, - ժողովուրդ, բոլբոլ կերեք, արաղը հետո կքաշենք...

Մեծ ու պուճուր, տարբեր ազգերի ներկայացուցիչներ բռնել են քյարխանայի ծայրերը: ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը, ով այստեղ է եկել ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանի, Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանի հետ, քյարխանայի ծայրերը բռնել է պարելով:

Հետո թութը թափեցին իշխանավորով, աշխատավորով, հետո թութը կերան իշխանավորով, աշխատավորով, հետո էլ շուրջպար բռնեցին՝ էլի միասին՝ իշխանավորով, աշխատավորով:

Հետո նախագահը սկսեց շրջել տաղավարներով, ուր ներկայացված են մարզի բերքն ու բարիքը, տեղական ուտեստները:

- Խնձորեսկ, Խնձորեսկ, Խնձորեսկ, - վանկարկում են Խնձորեսկի տաղավարից:

Նախագահը գայթակղվում է, մոտենում է Խնձորեսկի տաղավարին, ուր նրան հյուրասիրում են համեղ ուտեստներով, շաքի վրա արված խորովածով:

- Խոլեստերին չո՞ւնի, - կատակում է նախագահը:

Ով իր թանին թթու կասի:

- Ոչ,- եղավ պատասխանը:

Լինել փառատոնին եւ չհյուրընկալվել Քարահունջի տաղավարում, դա արդեն անհնարին է :

- Բարով եք եկել, միշտ լավ առիթներով լինեք մեզ մոտ, - ասում է Քարահունջի վարչական ղեկավար Լուսինե Ավետյանը:

Նախագահն էլ բարեմաղթանք ունի քարահունջեցիներին՝ ծնունդներ, կնունքներ, հարսանիքներ թող հաճախ լինեն այստեղ:

էջ 6

Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի արտադրությունը կանգ է առել անօրինական գործադուլի հետեւանքով

«ԳեոՊրոՄայնինգ» լեռնահանքային ընկերությունների «ԳեոՊրոՄայնինգ» միջազգային խումբը հաղորդում է «Ագարակի պղնձա-մոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ Տեխնոլոգիական տրանսպորտի արտադրամասի աշխատակիցների չարտոնված գործադուլի հետեւանքով կոմբինատի արտադրական գործունեության դադարի մասին:

Չարտոնված գործադուլի պատճառը հանդիսացել է աշխատանքային պայմանագրի կետերի եւ ՀՀ աշխատանքային օրենսգրքի տարընթերցումը:

Տեխնոլոգիական տրանսպորտի արտադրամասի աշխատակիցները կոմբինատի ղեկավարությանն ուղարկել են նամակ-դիմում, որում առաջադրել են լրացուցիչ դրամական միջոցների վճարման անհիմն պահանջ:

Կոմբինատի ղեկավարությունը 25.06.2019թ. պատասխանել է Տեխնոլոգիական տրանսպորտի աշխատակիցների կոլեկտիվ նամակին, որում սպառիչ պատասխան է տրվել: Եղել են հանդիպման, ինչպես նաեւ ՀՀ գործող օրենքների շրջանակում հարցի հնարավոր կարգավորման վերաբերյալ քննարկման առաջարկներ: Հանդիպմանն անպայման պետք է ներկա լիներ արհմիության կոմիտեի նախագահը եւ Մեղրի համայնքի ղեկավարը, սակայն տեխնոլոգիական տրանսպորտի աշխատակիցներն անտեսել են առաջարկը:

Հաջորդող օրերի ընթացքում ղեկավարության կողմից հանդիպումների առաջարկները նույնպես, անհայտ պատճառներով, անտեսվեցին: Հուլիսի 2 -ին ժ. 14.30-ից կոմբինատի աշխատանքն աբմողջությամբ կանգ առավ, իսկ կոմբինատի ղեկավարության կողմից առաջարկված արտադրամասի աշխատողների հանդիպումը Մեղրի համայնքի ղեկավարի հետ արդյունքներ չտվեց:

էջ 4



«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ հարստացուցիչ ֆաբրիկան

Նախագահ Արմեն Սարգսյանը Սյունիքում

էջ 1

Մեղրիի տարածաշրջանային բժշկական կենտրոնը շահագործվում է 2016 թվականից: Այն կառուցվել է Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Առողջապահական համակարգի արդիականացում» ծրագրի շրջանակում եւ սպասարկում է Ագարակ, Մեղրի քաղաքների եւ հարակից գյուղական համայնքների բնակչությանը:

«Տպավորված եմ, որ այստեղ ժամանակակից հիվանդանոց կա, որտեղ հոյակապ մարդիկ են աշխատում: Մեղրին իսկապես դրախտ է՝ թե՛ իր բնությամբ, թե՛ մարդկանցով: Հանրապետության նախագահի պաշտոնում սա իմ առաջին այցն է Մեղրի, բայց իհարկե վերջինը չէ, շուտով նորից կգամ»,-պատասխանելով լրագրողների հարցերին՝ ասել է նախագահը:

Արմեն Սարգսյանն այցելել է նաեւ Մեղրիի Մեծ թաղի Սուրբ Աստվածածին եկեղեցի:

***

Աշխատանքային այցով Սյունիքի մարզում գտնվող հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանը հուլիսի 5-ին այցելել է ՀՀ պաշտպանության նախարարության N զորամասի մարտական դիրքեր: Նախագահը հանդիպել է ծառայություն անցկացնող զինվորների եւ հրամանատարների հետ, շրջայց կատարել մարտական հենակետում եւ ծանոթացել ծառայության պայմաններին, մարտական պատրաստականության վիճակին:

Սահմանադրության օրվա առթիվ շնորհավորելով հերթապահություն իրականացնող զինվորներին ու սպաներին՝ նախագահը մասնավորապես նշել է, որ իր համար իսկապես մեծ ուրախություն եւ պատիվ է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրը գտնվել սահմանին: **«Ձեզնից յուրաքանչյուրը, դուք պաշտպանում եք ոչ միայն մեր սահմանը, այլ նաեւ՝ Սահմանադրությունը, մեր հայրենիքը, ձեր հարազատներին, ընտանիքները, երեխաներին, մայրերին, մեզ բոլորիս: Ես խոնարհվում եմ բոլորիդ առաջ՝ հասկանալով, որ այս դիրքերը մեր հայրենիքի պաշտպանության կարեւորագույն վայրերն են: Հեշտ չէ ամառվա շոգին եւ ձմեռվա ցրտին ամեն օր, 24 ժամ ծառայություն իրականացնել,-ասել է նախագահը:- Ես, որպես հանրապետության նախագահ, ուզում եմ բոլորի կողմից ձեզ խորին շնորհակալություն հայտնել եւ ասել, որ մենք հպարտ ենք ձեզնով: Սպասում ենք, որ ձեզնից յուրաքանչյուրը կշարունակի կատարել իր պարտականությունը, կպահպանի եւ կպաշտպանի իր հայրենիքը, կպահպանի եւ կպաշտպանի խաղաղությունը:**

Մաղթում եմ բոլորիդ առողջություն, բարի ծառայություն: Ամուր եղեք: Կրկին շնորհավորում եմ բոլորիդ եւ մեզ բոլորիս այսօրվա տոնի՝ Սահմանադրության օրվա առթիվ: Բարի ծառայություն»:

Մարտական հերթապահություն իրականացնող մի խումբ զինծառայողներ բարեխիղճ ու անձնվեր ծառայության համար պարգեւատրվել են հանրապետության նախագահի անվանական ժամացույցներով: Նախագահի անունից նաեւ հանձնվել են նվերներ:

***

Արմեն Սարգսյանն այցելել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ եւ ընկերության կողմից շահագործվող հանքավայրի տարածք: Ներկայացվել են հանքավայրի շահագործման տեխնոլոգիաները, տեխնիկական ու արտադրական հզորությունները, արտադրության ու արտահանման ծավալները: Անդրադարձ է եղել առաջիկա անելիքներին ու զարգացման ծրագրերին, նաեւ՝ համայնքներում իրականացվող սոցիալական ծրագրերին:

Նախագահ Սարգսյանը կարեւոր է համարել, որ բիզնեսը, արդյունաբերությունը, հանքը լինեն նաեւ սոցիալական կյանք, մշակույթ ստեղծող կազմակերպություն: **«Սա իմ ուղերձն է, իմ խնդրանքն ու առաջարկն է այս ընկերության կառավարիչներին՝ շարունակեք ուշադրություն դարձնել սոցիալական կյանքին»**,- ասել է նախագահ Սարգսյանը:

Ընդգծելով Կապանի օդանավակայանի կարեւոր նշանակությունը՝ Արմեն Սարգսյանն ասել է. **«Մեր հարավը զբոսաշրջության իմաստով կարծես թանկարժեք քար է, որը գաղտնի ենք պահել: Եվ եթե օդային կապ լինի, իրավիճակն էապես կփոխվի»:** Նախագահը նշել է, որ հարավն ունի փայլուն տվյալներ նաեւ գյուղատնտեսության, զանազան այլ արտադրությունների, թեթեւ արդյունաբերության, առեւտրային գործունեության համար: **«Ժամանակին Կապանում հազարավոր մարդիկ աշխատում էին թեթեւ արդյունաբերության ոլորտում, այստեղ կար գործարան, որը բամբակից եւ բրդից մեծ քանակությամբ արտադրանք էր տալիս, հազարավոր մարդիկ էին աշխատում: Ավանդույթը կարելի է վերականգնել, մանավանդ, որ կա առեւտրական ճանապարհ: Հարավը կարող է համալիր զարգանալ»**,- ասել է նախագահ Սարգսյանը :

***

Արմեն Սարգսյանն այցելել է մարզի արտադրական մի շարք ձեռնարկություններ:

«Սյունիք Ֆուդ» ընկերությունում, որը մասնագիտացած է պահածոների արտադրության մեջ, նախագահը ծանոթացել է արտադրության գործընթացին, զրուցել աշխատակիցների հետ: Արտադրամասերում շրջայցի ընթացքում ընկերության սեփականատեր Սարմեն Սարգսյանը տեղեկություններ է ներկայացրել արտադրության ծավալների ու հզորությունների վերաբերյալ:

Գործարանն ունի 80 աշխատակից, մթերման շրջանում աշխատակիցների թիվը հասնում է 250-ի: Ընկերությունը մթերում է իրականացնում ոչ միայն տարածաշրջանի, այլեւ Արցախի գյուղացիական տնտեսություններից: Արտադրանքը սպառվում է ոչ միայն տեղական շուկայում, այլեւ արտահանվում է:

Հանրապետության նախագահն ընկերության ղեկավարության հետ զրուցել է ընկերության արտադրության ծավալների ընդլայնման ու զարգացման

էջ 8

Սմբատ Օրբելյանը 60 տարեկան է

Հոբելյաններ նշելու հարցում միշտ վերապահումներ ենք ունեցել: Բայց մեզանում կան մարդիկ, որոնց հոբելյանը չենք կարող չնկատել:

Մերօրյա Սյունյաց աշխարհում նման մարդկանցից է Սմբատ Օրբելյան քաղաքացին ու բժիշկը, մեր հող ու ջրի նվիրյալն ու մեր կյանքի ընթացքով մտահոգ անհատականությունը:

60-ամյակն այս դեպքում վայելուչ առիթ է՝ բազմաթիվ սյունեցիների հարգանքն արտահայտելու հոբելյարի հանդեպ:

Եվ ուրեմն՝ սրտագին շնորհավորում ենք Սմբատ Օրբելյանին՝ ծննդյան 60-ամյակի կապակցությամբ, ցանկանում ամուր առողջություն, ընտանեկան երջանկություն եւ մտահղացումների իրականացում:

Թող տարիների նրա փորձն ու իմաստությունը, եռանդն ու լայնախոհությունն այսուհետ եւս ծառայեն մեր երկրամասին:

Սմբատ Օրբելյանը սերում է վաչագանյան նշանավոր գերդաստանից, որ մեծ հարգանք է վայելել (եւ շարունակում է վայելել) ոչ միայն Կապանում, այլեւ մարզում ու մարզի սահմաններից դուրս. հայրը վաստակաշատ մանկավարժ, ճանաչված մտավորական Ջոնիկ Օրբելյանն է, մայրը՝ Կապանի տարածաշրջանի առողջապահական համակարգի երախտավոր Սեդա Մուրադյանը:

Մարդու անցած ճանապարհի, մարդու գործունեության անաչառ ու անողոք քննադատն ու գնահատողը ժամանակն է:

Իսկ ժամանակը Սմբատ Օրբելյանին գնահատել ու գնահատում է դրական լույսի ներքո, քանզի նրա ապրած կյանքը, արած-դրածը ներշնչում են ընդգծված հարգանք:

Ու թերեւս գնահատվելու է, որովհետեւ ասելիքի ու անելիքի ճանապարհին է դեռ…

Մեծահամբավ սյունեցի Ֆրունզե Պետրոսյանի դուստր Անուշ Պետրոսյանի հետ օրինակելի ընտանիք կազմեց նա. երեք զավակ ունեցան (Արամ, Արթուր, Սեդա) ու կարողացան հայեցի դաստիարակությամբ եւ պատշաճ կրթությամբ նրանց դարձնել հանրության համար օգտակար եւ պահանջված անձնավորություններ:

Մոտ քսան տարի Սմբատ Օրբելյանը գլխավորեց Կապանի բժշկական կենտրոնը:

Ոչ սովորական ժամանակներ, բայց եւ ակնառու հաջողություններ՝ հիվանդանոցի շենքային պայմանների բարելավում, տեխնիկական միջոցների մեծածավալ արդիականացում, բնակչության բուժական սպասարկման նոր եւ մատչելի ձեւերի ներդրում, տեղացի մասնագետների եւ հատկապես երիտասարդ կադրերի համար աշխատանքի գրավիչ պայմանների ստեղծում:

Սակայն ժամանակները, ինչպես նշվեց, ոչ սովորական ու ոչ դյուրին էին՝ Արցախյան պատերազմ, որի ընթացքում ռազմական գործողությունների թատերաբեմ էր դարձել ամբողջ Սյունիքը, հայրենի երկրամասի անվերջ ռմբահարումներ, հետպատերազմյան դժվարին տարիներ, ապրիլյան իրադարձություններ…

Գրեթե ռազմաճակատային հոսպիտալի վերածված Կապանի հիվանդանոցն արժանապատվորեն կատարեց իր առաքելությունը հայոց նորագույն պատմության այդ բարդ ժամանակահատվածում: Հազարավոր մարդկանց կյանք փրկվեց, հազարավոր ազատամարտիկներ ապաքինվելուց հետո վերադարձան ռազմաճակատ ու շարունակեցին մասնակցել մեր ազգային գոյակռվին:

Այդ ամբողջ ընթացքում Սմբատ Օրբելյանը, բազում գործընկերների հետ, ցույց տվեց, որ իր մասնագիտության լավագույն կրողներից է: Ցույց տվեց նաեւ, որ ինքն արտակարգ իրավիճակներում առողջապահական գործի հաջողված կազմակերպիչ է:

Եվ հիմա, երբ տարիների հեռվից հետադարձ հայացք ենք ձգում վճռորոշ այդ օրերի սյունիքյան կացությանը, ակնհայտորեն երեւում է վերստին, որ երկիրը պետություն է դառնում հենց նման նվիրյալների վարքով ու ջանքով:

Տարիներ շարունակ պատիվ ենք ունեցել վայելելու Սմբատ Օրբելյանի եւ նրա ընտանիքի մտերմությունը:

Ու մարդկային նրա որակներից մի քանիսին պատշաճ ենք համարում անդրադառնալ այսօր:

Առհասարակ քչերն են ընդունակ ապրել վերանձնական կյանքով, իր բնօրանի, իր երկրամասի հոգսերով. Սմբատ Օրբելյանը, անվիճելիորեն, այդ քչերից է: Նույնիսկ շատ իշխանավորներ ի վիճակի չեն կյանքն ու երեւույթները դիտարկել անանձնական պատուհանից, ովքեր ի պաշտոնե պարտավոր են այդպիսին լինել:

Միգուցե իր մասնագիտությամբ է պայմանավորված, որ մարդը նրա համար բարձրագույն եւ անսակարկելի արժեք է: Նրա համար խորթ է մարդկային ճակատագրերի հանդեպ քամահրանքը՝ անկախ այն բանից, թե

տվյալ անձնավորությունը տրոհված մեր հանրության ո՞ր բարիկադում է դիրքավորված:

Սեփական ուժերին ապավինելը համարում է արժանապատիվ ապրելու բանաձեւի առանցքային բաղադրիչը:

Շատ-շատերից ուշագրավ մի հատկանիշով էլ է առանձնանում. ամենադժվարին պահերին ու իրավիճակներում անգամ իրեն սատարողներ չի որոնում, նույնիսկ նրանց մեջ, ովքեր տասնամյակներ շարունակ ընկեր, գործընկեր, հացընկերներ են եղել, ամեն ինչ թողնելով մարդկանց բարոյական հավատամքին:

Բայց եւ սրբապղծության պես մի բան է համարում երեկվա ընկերոջ, գործընկերոջ, հացընկերոջ, բարեկամի ուրացումը:

Սմբատ Օրբելյանի կյանքում վերջին երկու տարում տեղի ունեցան իրադարձություններ, որոնց, իր եւ մեզ համար նշանավոր այս օրը, գուցե եւ չանդրադառնայինք, բայց մեր խոսքն ամբողջական չէր լինի: Երբ 2016-ին Սյունիքի մարզային իշխանությունը, իսկ դրանից առաջ նաեւ Հայաստանի մետաղական խոշորագույն հանքավայրը, նվիրեցին նետողաց ազգի վարձկաններին, թույլատրվեց մեր լեռնաշխարհում մի կողմ դնել Սահմանադրությունը, օրենքները…

Սկզբից եւեթ խնդիր դրվեց սյունեցիների հոգեկերտվածքից ու ներաշխարհից հանել արժանապատվության զգացումը, երկրամասի տիրոջ զգացողությունը:

Գլխավոր թիրախ հայտարարվեցին մարզի մտավորականները եւ բոլոր նրանք, ովքեր սեփական դեմք ունեն:

Երեւելի բազմաթիվ գործիչներ հայրենի բնօրրանում հայտարարվեցին թշնամի՝ զրկվելով նույնիսկ իրենց մասնագիտությամբ աշխատելու հնարավորությունից:

Աշխատանքից ազատվեց նաեւ Սմբատ Օրբելյանը, ում պաշտոնանկությունը դատարանի ուժով գնահատվեց ապօրինություն:

Ու հետո (առ այսօր), դատարանի վճռից հետո անգամ, այդ ապօրինության հետեւանքը չվերացվեց, ճշմարտությունը չվերականգնվեց:

Անտարակույս, խայտառակ այդ վիճակը Սմբատ Օրբելյանի պարտությունը չէ, այլ մեր խեղված իրականության պարտությունն է եւ հատկապես հեղափոխական իշխանության պարտությունը:

Եվ ինչն է ուշագրավ…

Այդ ամենից հետո նույնիսկ չարությունն ու վրեժխնդրությունը չկարողացան նրան առնել իրենց շրջապտույտի մեջ, որովհետեւ երկիրն իրենն է համարում, նրա ե՛ւ լավը, ե՛ւ վատը՝ նույնպես:

Նաեւ այն բանից հետո, երբ ծպտված օտարականներն անանուն զրպարտագրեր-տեսանյութեր են իր մասին շաղ տալիս, ինքը շարունակում է բարի հայացքով նայել մարդկանց ու աշխարհին:

Այդ ամենի ու անցած ճանապարհի շնորհիվ է, որ 60-ամյակի տոնական այս օրն ուզում ենք հիշեցնել՝ հարգելի Սմբատ Ջոնիկի, որտեղ էլ գտնվեք, ինչ իրավիճակում եւ միջավայրում էլ հայտնվեք՝ Ձեր ոտքը Սյունյաց աշխարհի հողի վրա է, եւ այդ հողը՝ մեր փոքր հայրենիքը, հպարտանում է, որ ունի Սմբատ Օրբելյան զավակ:

Ծնունդդ շնորհավոր, հարգելի բարեկամ:

Սամվել Ալեքսանյան
7 հուլիսի 2019 թ.

Վերապատրաստման դասընթացներ Սյունիքի մարզում

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիան ՄԱԶԾ-ԳԷՀ «Գլոբալ բնապահպանական օգուտների ստեղծում շահագրգիռ կողմերի էկոլոգիական կրթության եւ իրազեկության բարձրացման միջոցով» ծրագրի շրջանակներում իրականացնում է «Պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, ինչպես նաեւ բնական ռեսուրսների կառավարման ոլորտում ներգրավված մասնավոր հատվածի ներկայացուցիչների համար բնապահպանական ոլորտում վերապատրաստման դասընթացների կազմակերպում եւ իրականացում» ծրագիրը:

Մասնակցությունը բնապահպանական հիմնախնդիրների վերաբերյալ վերապատրաստման դասընթացներին հեռանկարային է պետական եւ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների համար՝ հաշվի առնելով նրանց դերը բնապահպանական տեսանկյունից կայուն եւ տնտեսապես շահավետ որոշումների կայացման հարցում:

Ծրագրի նպատակն է հզորացնել էկոլոգիական կրթությունը եւ իրազեկումը որպես բնական պաշարների կառավարման գործիքներ օգտագործելու որոշում կայացնողների կարողությունները: Ի հավելումն, ծրագիրը բարձրացնելու է հանրային գիտելիքները բնապահպանական հարցերի եւ շրջակա միջավայրի պաշտպանության շուրջ, ինչպես նաեւ փոխանցելու է անհրաժեշտ գիտելիքներ թիրախային շահառուներին:

Էկոլոգիական նոր քաղաքականության ձեւավորումը ներկա եւ ապագա սերունդների համար էկոլոգիապես անվտանգ շրջակա միջավայրում առողջ եւ բարեկեցիկ կյանքով ապրելու կայուն երաշխիքներ կստեղծի: Այս նպատակի իրագործումը կարեւոր խնդիր է եւ անհնար է առանց էկոլոգիական կրթության ու դաստիարակության:

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կողմից իրականացվող ՄԱԶԾ ԳԷՀ «Գլոբալ բնապահպանական օգուտների ստեղծում շահագրգիռ կողմերի էկոլոգիական կրթության եւ իրազեկության բարձրացման միջոցով» ծրագրի շրջանակում հուլիսի 1-4-ը վերապատրաստման դասընթացներ կազմակերպվեցին Սյունիքի մարզի Մեղրի, Կապան եւ Գորիս քաղաքներում:

Դասընթացների 71 մասնակիցները Սյունիքի մարզպետարանի քաղաքացիական ծառայողներն էին, Մեղրիի, Կապանի եւ Գորիսի ու այլ համայնքապետարանների համայնքային ծառայողներն ու աշխատակիցները, այդ թվում՝ համայնքի ղեկավարներ եւ համայնքի ղեկավարների տեղակալներ, ավագանու անդամներ:

Նշենք, որ, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի՝ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված մի շարք լիազորություններ ուղղակիորեն վերաբերում են շրջակա միջավայրի պահպանությանը եւ բնօգտագործմանը:

Վերապատրաստման ծրագրի նպատակը եւ դասընթացների ընթացքում ներկայացված մոդուլներն ուղղված էին ունկնդիրների շրջանում բնապահպանական խնդիրների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը՝ ներառյալ համաշխարհային եւ հայաստանյան բնապահպանական մարտահրավերները եւ դրանց լուծման արդի մոտեցումներն ու միջոցները, բնապահպանական կայուն կառավարման գործիքները, Հայաստանի մասնակցությունը միջազգային բնապահպանական կոնվենցիաների եւ դրանց շրջանակներում ստանձնած պարտավորությունները, բնապահպանության կապը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հետ, բնապահպանության կարեւորությունն ազգային անվտանգության եւ կայուն զարգացման տեսանկյունից:

Դասընթացի ընթացքում քննարկվել են Հայաստանի բնապահպանական մարտահրավերներին ու հնարավորություններին, պատասխանատու սպառմանը, բնապահպանական կառավարմանը, կայուն գյուղատնտեսությանը, թափոնների վերացմանը վերաբերող թեմաներ:

Դասընթացի սկզբում եւ ավարտին անցկացվել է թեստ՝ դասընթացի արդյունավետության աստիճանը պարզելու նպատակով: Նախնական եւ ավարտական թեստերի արդյունքներն էականորեն տարբերվում էին: Ավարտական թեստի արդյունքը բավական գոհացուցիչ էր, ինչը նշանակում է, որ դասընթացը ծառայել է իր նպատակին:

Վերապատրաստումից հետո մասնակիցները հնարավորություն ունեցան նաեւ գնահատելու վերապատրաստման ծրագիրը, ներկայացնելու իրենց առաջարկությունները ու կարծիքները:

Ավարտին մասնակիցներին հանձնվեցին հավաստագրեր:

Դասընթացի մասնակիցները մեծ գոհունակություն հայտնեցին ծրագրի իրականացման համար եւ առաջարկեցին բնապահպանական թեմաներով վերապատրաստման ծրագրերում ընդգրկել բնակչության ավելի լայն շերտերի:

Գայանե Հովհաննիսյան
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավախորհրդատու, դասախոս

Տղաները մեկնում են ծառայության

Մարզկենտրոն Կապանում հուլիսի 5-ին մեկնարկեց 2019 թվականի ամառային զորակոչը: Կապան եւ Քաջարան համայնքներից 33 զինակոչիկ հանրապետության Սահմանադրության օրը մեկնեց հայոց բանակ՝ կատարելու սահմանադրական պարտքը: Ավանդույթի համաձայն՝ առաջին զորակոչին նվիրված հանրահավաքը տեղի ունեցավ Գարեգին Նժդեհի անվան հուշահամալիրում: Զինակոչիկներին առաջինը բարեմաղթանքի խոսք հղեց Կապանի համայնքապետ Գեւորգ Փարսյանը՝ մասնավորապես նշելով, որ զինծառայության երկու տարիները, բացի ռազմական գիտելիքներից, երիտասարդին տալիս են այնպիսի հմտություններ եւ ունակություններ, որոնք նրան անհրաժեշտ ու օգտակար են լինում ողջ կյանքի ընթացքում: Այս համատեքստում նա հայրենիքի ապագա պաշտպաններին հորդորեց լավագույնս ուսումնասիրել ռազմական զենքն ու տեխնիկան, ժամանակին կատարել հրամանատարների հրամաններն ու կարգադրությունները, նաեւ դրանով բարձր կպահեն իրենց համայնքի պատիվը: «Միշտ հիշեք, որ տանը ձեզ սպասում են»,- վերջում ասաց Գ. Փարսյանը:

Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանի ուղերձը հրապարակեց մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի գլխավոր մասնագետ Մարատ Պետրոսյանը: Զինակոչիկներին անփորձանք ծառայություն եւ բարի վերադարձ մաղթեցին երկրապահ կամավորականների միության Կապանի տարածքային բաժանմունքի նախագահ Սուրիկ Հովսեփյանը, Կապանի վետերանների խորհրդի նախագահ Ռաֆիկ Հարությունյանը, Սյունիքի զինկոմի տեղակալ, փոխգնդապետ Արմեն Հարությունյանը:

«Լինենք խաղաղ օրերի զինվորներ, եթե պատերազմական գործողություններ սկսվեն, մենք միշտ ձեր կողքին ենք լինելու, ինչպես 2016 թվականի ապրիլյան օրերին», - ասաց երկրապահ Սուրիկ Հովսեփյանը:

«Որպես ժողովուրդ մենք տարածաշրջանում դատապարտված ենք լինելու շատ ուժեղ թե՛ մարտական ոգով, թե՛ հավատքով, - հիշեցրեց Կապանի հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Հեբոյանը, - **ով, եթե ոչ մենք պիտի պահենք եւ պահպանենք մեր սրբազան երկիրը: Այսօր ձեր ուսերին է դրված հայ մարդու արժանապատվության պահպանությունը, ուստի պիտի լինեք ուժեղ եւ միասնական: Հավատացած եմ, որ ձեր պարտականությունները սրբորեն կկատարեք, քանզի հայրենի հողն է այն հենքը, որի վրա պիտի կառուցենք մեր ապագան»:**

Հայրենիքի ապագա պաշտպանները ծաղիկներ խոնարհեցին հայ ազգի նվիրյալ Գարեգին Նժդեհի հուշարձանին: Օրհնանքների եւ բարի մաղթանքների խոսքերի ներքո նրանք մեկնեցին հանրապետական հավաքակայան:

Վահրամ Օրբելյան

Դպրոցում անվանակոչություն էր

«Մայիսյան հաղթանակներ» շարքից Արծվանիկի միջնակարգ դպրոցում վերջերս կազմակերպվեց ցերեկույթ՝ «Վասն հայրենյաց» խորագրով: Միջոցառումը մի այլ խորհուրդ ուներ. կրթօջախի նախնական զինվորական պատրաստության դասասենյակը կոչել համագյուղացի, Արցախյան գոյամարտի ակտիվ մասնակից, «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանի ասպետ, Սյունիքի զինկոմ, գնդապետ Արարատ Մանուչարյանի անվամբ: Դպրոց էին այցելել Արարատ Մանուչարյանի մարտական ընկերները, այդ թվում՝ 97-րդ մոտոհրաձգային բրիգադի գումարտակների հրամանատարներ, ազատամարտիկի հարազատները, նրա 93-ամյա հայրը՝ գյուղի հայրենագիտական թանգարանի տնօրեն, Արծվանիկ բնակավայրի պատվավոր անդամ Էդվարդ Մանուչարյանը, համագյուղացիներ, մարզի կրթության ոլորտի ներկայացուցիչներ:

Մարտական ընկերները դրվագներ հիշեցին իրենց զինակցի անցած մարտական ուղուց, նաեւ հարգանքի տուրք մատուցեցին սահմանների պաշտպանության մարտերում ընկած իրենց մարտական ընկերների հիշատակին: Հանդիպմանը գնդապետ Արարատ Մանուչարյանը ռազմահայրենասիրական դաս անցկացրեց՝ նաեւ պատասխանելով դպրոցականներին հետաքրքրող հարցերին: Վերջիններս հանդես եկան գրական-երաժշտական համադրույթով՝ հընթացս ներկայացնելով մերօրյա ազատամարտի դրվագները, մասնավորապես բերդաքաղաք Շուշիի ազատագրումը: Անդրադարձ եղավ Մայիսյան հաղթանակների (Ավարայր, Սարդարապատ, Շուշի) խորհրդին:

Կրթօջախի տնօրեն Լուսինե Հարությունյանը նշեց, որ Արարատ Մանուչարյանի անունով դասասենյակ կոչելն ինքնանպատակ չէ, նրա ավանդը մեծ է թե՛ հայրենի գյուղի բարգավաճման, թե՛ մեր պատմական հայրենիքի հողերն ազատագրելու, թե՛ մերօրյա բանակաշինության գործում: Եվ մինչեւ օրս էլ նա բանակի կողքին է ու իր տղամարդկային ոգով, շիտակությամբ օրինակ է ծառայում շրջապատին:

Միջոցառման ժամանակ ելույթ ունեցողները գնահատեցին այն փաստը, որ Արցախյան պատերազմում մնայուն հետք թողած զինվորականը գնահատվում է կենդանության օրոք:

Արարատ Մանուչարյանին հանձնվեց Սյունիքի մարզի ազատամարտիկների վետերանների միության «Վարդան Մամիկոնյան» մեդալ, իսկ կրթօջախի տնօրեն Լուսինե Հարությունյանն արժանացավ Սյունիքի զինկոմի պատվոգրին՝ մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության համար:

Վահրամ Օրբելյան

Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի արտադրությունը կանգ է առել անօրինական գործադուլի հետեւանքով

էջ 1

Հուլիսի 3-ին կոմբինատի ղեկավարությունը, հերթական անգամ, աշխատակիցներին հրավիրեց հարցը քննարկելու, սակայն հրավերը կրկին մերժվեց: Այդուհանդերձ, կայացավ արտադրամասի աշխատակիցների հանդիպումը Սյունիքի մարզպետի եւ Մեղրի համայնքի ղեկավարի հետ, որը եւս ավարտվեց անարդյունք:

Կոմբինատի ղեկավարությունը գտնում է, որ տեխնոլոգիական տրանսպորտի արտադրամասի աշխատակիցների կոլեկտիվ նամակում նշված պահանջներն անհրաժեշտ է լուծել իրավական դաշտում, ՀՀ օրենսդրության եւ իրավական ակտերի շրջանակում՝ առանց արտադրական գործունեության դադարեցման: Այդ մասին բազմիցս նախազգուշացրել էին կոմբինատի ղեկավարությունը, Սյունիքի մարզպետը եւ Մեղրի համայնքի ղեկավարը:

Ներկա պահին Տեխնոլոգիական տրանսպորտի արտադրամասի աշխատակիցները շրջափակել են Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի գրասենյակը եւ հրաժարվում են բանակցային գործընթաց սկսել իրավական դաշտի շրջանակում:

Կոմբինատի աշխատակիցների գործողությունները չեն համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին եւ զգալի վնաս են հասցնում կոմբինատին, Մեղրի համայնքին եւ ՀՀ պետական բյուջեին: Կոմբինատի ղեկավարությունը նախազգուշացնում է. անօրինական գործադուլի նախաձեռնողներն աշխատանքային պայմանագրի, ՀՀ աշխատանքային օրենսդրության եւ այլ նորմատիվ ակտերի շրջանակում կենթարկվեն պատասխանատվության:

«ԳեոՊրոՄայնինգ» ընկերությունը հիմնադրվել է 2001 թվականին, այն միջազգային մասնավոր ընկերություն է՝ ոսկու եւ այլ մետաղների դիվերսիֆիկացված բազայով: Հայաստանում ընկերությանն են պատկանում Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը եւ «ԳՊՄ գոլդ» ընկերությունը, որը շահագործում է Սոթքի ոսկու հանքը եւ Արարատի ոսկու կորզման ֆաբրիկան:

2007 թվականից ընկերությունն «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի» զարգացման համար ներդրել է 79 մլն ԱՄՆ դոլար: Ներկայումս Ագարակի կոմբինատում աշխատում է 1040 մարդ: Բանվորների եւ ինժեներատեխնիկական անձնակազմի միջին աշխատավարձը (առանց կառավարող անձնակազմի) կազմում է 340 000 ՀՀ դրամ:

2008-ից մինչեւ 2018 թվականն ընկած ժամանակահատվածում «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» Փակ բաժնետիրական ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարված հարկերը եւ այլ վճարները կազմել են 121. 9 մլն ԱՄՆ դոլար, ներառյալ ԱԱՀ գումարների վճարումները: 2019 թվականին Ագարակի կոմբինատը նախատեսում էր ՀՀ բյուջե վճարել մոտավորապես 12 մլն ԱՄՆ դոլար՝ ներառյալ ԱԱՀ գումարների վճարումները:

Գործունեության արդյունքներն ամփոփելով նշենք, որ «ԳեոՊրոՄայնինգը» Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման համար ներդրել է ավելի քան 540 մլն ԱՄՆ դոլար:

8 հուլիսի 2019թ.

Թիվ 12 ընտրատարածքից Աժ պատգամավորներին հրավիրում ենք հանդիպման

Նաիրա Զոհրաբյան

Սերգեյ Բագրատյան

Կարեն Համբարձումյան

Արմեն Խաչատրյան

Սրբուհի Գրիգորյան

Տիգրան Կարապետյան

Անկախության տարիներին, որքանով հիշում եմ, Սյունիք-Զանգեզուր տարածաշրջանն այսպիսի ներկայություն (քանակական առումով) չի ունեցել հայոց խորհրդարանում:

Եվ դա շատ լավ է...

Ահա եւ մեր պատգամավորները՝ Նաիրա Զոհրաբյան, Սերգեյ Բագրատյան, Կարեն Համբարձումյան, Արմեն Խաչատրյան, Սրբուհի Գրիգորյան, Տիգրան Կարապետյան:

Անտարակույս, նրանց ակտիվ գործունեության դեպքում Սյունիքի մարզում (նաեւ Վայոց ձորում, որ ներառված է թիվ 12 ընտրատարածքի մեջ) շատ խնդիրներ կարելի է լուծել:

Աժ ընտրություններից անցել է մոտ ութ ամիս, եւ, կարծեք, ժամանակն է, որ ընտրողներս իմանանք՝ ինչո՞վ են զբաղված մեր ընտրյալները, որքանո՞վ են կատարում նախընտրական խոստումները:

Մեզ՝ Գորիս խոշորացված համայնքի ավագանու անդամներիս, որպես ընտրողներ, նախեւառաջ հետաքրքրում է, թե մեր ընտրյալները որքանո՞վ են ապրում գորիսեցի ընտրողների մտահոգություններով, ի՞նչ կոնկրետ հարցերում են նպաստում Գորիսի համայնքային իշխանությանը, որքանո՞վ են Գորիսի հիմնախնդիրների լուծմանը հետամուտ լինում օրենսդիր մարմնում եւ գործադիրում:

Գորիսի համայնքապետ Առուշ Առուշանյանը, ավագանու աջակցությամբ, ծավալուն աշխատանքներ է իրականացնում համայնքային կյանքի բազմաթիվ ոլորտներում, ինչի արդյունքներն ակնհայտորեն երեւում են:

Բայց համայնքի հաջողություններն առավել շատ, առավել ընդգրկուն եւ հիմնավոր կլինեն, եթե մեր պատգամավորները լինեն ընտրողներիս հետ, Գորիս համայնքի, ինչպես եւ ընտրատարածքի մյուս համայնքների հետ:

Հենց այս մտածումների արդյունքում էլ հանգել ենք եզրակացության, որ հասունացել են թիվ 12 ընտրատարածքից պատգամավորների եւ Գորիս համայնքի ավագանու անդամների միջեւ հանդիպումն ու երկխոսությունը:

Դա, համոզված ենք, կդառնա առաջին ու գործնական քայլը՝ ստեղծելու մի հարթակ, որտեղ պարբերաբար կիմանանք, թե ինչով են զբաղված մեր ընտրյալները, կճշտենք, թե Գորիսի առջեւ ծառացած առավել կարեւոր եւ օրախնդիր հարցերի լուծման ճանապարհին ինչ ձեւաչափով ու ինչպիսի մասնակցություն կունենան պատգամավորները:

Գրեթե վստահ եմ, որ թիվ 12 ընտրատարածքից Աժ պատգամավորներն ըմբռնումով եւ ուրախությամբ կարձագանքեն Գորիսի ավագանու այս նախաձեռնությանն ու առաջիկա օրերին (իրենց համար հարմար ժամանակ) կայցելեն Գորիսի համայնքապետարան ու կհանդիպեն համայնքի ավագանու հետ:

Անշուշտ, ցանկալի է, որ վեց պատգամավորը միասին գան հանդիպման, բայց ենթադրվող համագործակցության արդյունավետությունը չի տուժի, եթե նույնիսկ այցելեն առանձին-առանձին:

Եվ ուրեմն՝ սպասում ենք թիվ 12 ընտրատարածքից Ազգային ժողովի պատգամավորներ Նաիրա Զոհրաբյանի, Սերգեյ Բագրատյանի, Կարեն Համբարձումյանի, Արմեն Խաչատրյանի, Սրբուհի Գրիգորյանի, Տիգրան Կարապետյանի՝ Գորիսի համայնքապետարան այցելելուն, որտեղ էլ կհանդիպեն համայնքի ավագանու անդամներին հետ:

Գորիս համայնքի ավագանու անդամ Կարեն Լազարյանի (Karen Lazaryan) ֆեյսբուքյան էջից

Որ թափանցիկ լինի դպրոցական բյուջեն

Հունիսի 28-ին «Կապանի ուսուցիչներ» հասարակական կազմակերպությունում տեղի ունեցավ Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսություն շրջանառություն» ծրագրի շրջանակում անցկացված «Բյուջե՝ բոլորի համար հասանելի» ծրագրի ամփոփումը: Ծրագրի տեւողությունը վեց ամիս էր՝ հունվարի 8-ից հունիսի 30-ը, անցկացվեց երկու փուլով, առաջինը մշտադիտարկման (մոնիտորինգի), երկրորդը՝ ջատագովության միջոցով:

Ծրագրի ղեկավար Գագիկ Հովհաննիսյանի փոխանցմամբ՝ մոնիտորինգ անցկացվել է 63 ֆոկուսային խմբերում՝ դպրոցական բյուջեների նախագծման, հաստատման եւ հաշվետվողականության մշտադիտարկում, որից 60-ը դպրոցներում՝ (Կապանի, Մեղրու եւ Քաջարանի) եւ երեքը՝ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ (մոտ 15-20 հասարակական կազմակերպությունների): Նախապես ծրագրի սոցիոլոգի կողմից կազմվել էր հարցաթերթիկ, որով կատարվում էր հարցումը, ընդ որում՝ ծնողական, աշակերտական, մանկավարժական եւ կառավարման խորհուրդների հետ առանձին-առանձին:

Ինչպես ցույց տվեցին ուսումնասիրությունները, բյուջեի հասանելիության առումով վիճակն այնքան էլ բարվոք չէ: Աշակերտների, ուսուցիչների, ծնողների վերաբերմունքը միանշանակ չէ բյուջեի հասանելիության առումով: Ուսուցիչներից ոմանք հայտնում են, որ իրենց չի հետաքրքրում բյուջեին առնչվող խնդիրները, իրենք վստահում են դպրոցի տնօրենին, տեղյակ են, որ բյուջեի 90 տոկոսից ավելին հատկացվում է աշխատավարձ վճարելուն եւ այլն: Իսկ ըստ տարածաշրջանների սուսումնասիրությունները եւս որոշ առանձնահատկություններ են երեւան հանել: Քաջարանում, օրինակ, բյուջեի առումով հետաքրքրությունն ավելի նվազ է:

Ծրագրի նպատակներից էր նաեւ աշակերտների եւ ծնողների շրջանում հետաքրքրություն առաջացնել բյուջեի պլանավորման, ծախսման եւ հաշվետվողականության գործընթացների հանդեպ, ինչն իրականացվել է անանուն հարցումների միջոցով: Ծրագրի ղեկավարի համոզմամբ՝ ծրագիրը տվել է դրական արդյունք, բացահայտվել են թերությունները, նշվել դրանց վերացման ուղիները, գրի են առնվել հարցման ենթարկվածների առաջարկները: Այս ամենի արդյունքում կազմվել է դպրոցի բյուջետային գործընթացի օրացույցը, որում արտացոլված է բյուջեի նախագծի մշակման, այն դպրոցի խորհրդի հավանությանը ներկայացման եւ պետական լիազոր հաստատման, բյուջեի նախագծի քննարկումների կազմակերպման եւ լրամշակման, բյուջեի վերաբերյալ տարեկան հաշվետվությունների ներկայացման եւ հրապարակման ժամկետները: Ընդ որում՝ այդ օրացույց-թերթիկը պետք է փակցված լինի դպրոցում՝ տեսանելի վայրում. բյուջեն կարող է հրապարակվել տեղական մամուլում:

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության Սյունիքի մարզային մասնաճյուղի իրավաբան, «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակում Կապանի ինկուբատորի համակարգող Վաչե Բաղդասարյանը հայտնեց, որ «Բյուջե՝ հասանելի բոլորի համար» ծրագիրը դրական արդյունք է տվել հանրակրթական ուսումնական հաստատություններում բյուջեի պլանավորման, նախագծերի հետ կապված: «Կապանի ուսուցիչներ» ՀԿ-ի անդամ Լիլիթ Բաբայանը տեղեկացրեց, որ հուշագիր է ստորագրվելու մի կողմից «Կապանի ուսուցիչներ» ՀԿ-ի (նախագահ՝ Մագդա Գեւորգյան), մյուս կողմից՝ Սյունիքի մարզպետարանի (ի դեմս Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանի): Հուշագրով կողմերը համաձայնում են աջակցել հանրակրթական դպրոցների բյուջեների նախագծման, հաստատման եւ հաշվետվողականության գործընթացների բարելավմանը, ինչպես նաեւ կենտրոնացնել տնօրենների եւ կառավարման խորհրդի անդամների կարողությունները՝ արտաբյուջետային ֆինանսական միջոցների ներգրավման առումով:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Ավանդական դարձած թթի հերթական փառատոնը

էջ 1

Ու տեղում անմիջապես «ջենտլմենական պայմանագիր» է կնքվում. Լուսինեն նախագահին հրավիրում է նշանված իր երկու դուստրերի հարսանիքին:

Չնայած սուղ ժամանակին, նախագահը սիրով լուսանկարվում է բոլոր ցանկացողների հետ, իսկ նրանք շատ են ու ամեն քայլափոխի:

Փառատոնի ակորդները նոր երանգներ են ստանում: Ուրախ շուրջպար է, երգ-երաժշտություն: Եվ հետաքրքիրն այն է, որ այսօրվա սերունդն ազգային երգերի ու պարերի սիրահար է, այսինքն՝ այսօրվա սերունդն ամուր է կանգնած իր ակունքների մոտ եւ ուզում է ակունքն այդ միշտ պահել պարզ, զուլալ ու ջինջ: Եվ փոքրիկ խմբերով նրանք երգում են մեր ազգային երգերը, պարում մեր ազգային պարերը եւ այդ ամենը փորձում սովորեցնել արտասահմանցի հյուրերին, ովքեր ոչ միայն չեն հրաժարվում, այլեւ սիրով պարում են երիտասարդների հետ:

Հայկական ավանդական ուտելիքների բույրն ու համը խառնվելով իրար՝ ստեղծել են փառատոնի խճանկար-պատկերը:

Հյուրասիրությունը սահմաններ չի ճանաչում, կենացներն էլ, ինչպես ասում են, քանի գնում քաղցրանում են:

Հարթաշեն գյուղի վարչական ղեկավար Արմեն Խաչատրյանը խմում է հայի բարի հոգու եւ գերմանացու ճշտապահության կենացը:

- Արժե, - ասում է գերմանուհի Կայա Քաենզլը եւ համտեսում օղին, - այս եղանակին ես չեմ խմում, տաք է, բայց այս օղին չխմել՝ անհնարին է:

Սյունիքի մարզից ընտրված պատգամավորներ Արմեն Խաչատրյանը, Կարեն Համբարձումյանը եւս կենաց ունեն: Այդ կենացը Սյունիքի զարգացմանն է վերաբերում, քանի որ, ըստ նրանց, Սյունիքը Հայաստանի ողնաշարն է: Եվ պետք է այնպես զարգացնել մարզը, զարգացման այնպիսի տեմպեր ապահովել, որ այն օրինակ ծառայի մյուս մարզերին:

Ամեն տաղավար, ամեն սեղան իր կենացն ունի: Եվ կենացն այդ հողի աշխատավորի, պատ շարողի, փողոց մաքրողի, հաց թխողի, հանդը հաց տանողի, սահմանը պահող զինվորի մասին է, այսինքն՝ ողջ հայ ժողովրդի լինելիության, հարատեւության համար բաժակ բարձրացվեց:

Գնդապետ Մելիքսեթ Պողոսյանը, ով հիմա Սյունիքի երկրապահ կամավորականների միության նախագահն է, ասում .

- Այս փառատոնը ոսկե տոն է, բերքի, արարման տոն, միասնության տոն: Այս փառատոնը նաեւ մեսիջ ունի՝ լինենք հանդուրժող մեկմեկու հանդեպ, միասնական, շատ սիրենք մեր հայրենիքն ու ամեն տան թող տասը երեխա ծնվի ու մեծանա խաղաղության մեջ:

Թթի փառատոնին մշակույթ ու սպորտ իրար են խառնվել:

Գուսան Աշոտի հոգեզմայլ երգերը սարերն են դրնգացնում, որ կատարում են Գուսանի անունը կրող համույթի երգիչները, Վահե Մելքոնյանի պարի խումբ էլ առնական պարերով է լցնում օրը, Գ. Պարոնյանի անվան արվեստի դպրոցի սաներն իրենց աշխատանքներն են ցուցադրում: Աննա Տատինցյանն էլ կուլա է նկարում՝ հենց գետնին նստած, իսկ նրա եղբայրը՝ Դավիթը, դեռ չի որոշել:

Ձեռնամարտի ջատագովներնեերը հավաքվել են Միրզոյան Սերյոժայի շուրջ, ով ծանրամարտի մարզիչն է: Հենց ինքը՝ մարզիչը, անխնա հաղթում է բոլորին:

-Քեզ իսկական հաղթողներ եղե՞լ են, - հարցնում եմ նրան: Հարցս այդպես եմ ձեւակերպում, որովհետեւ մարզիչը հաճախ «սուտլիկ-մուտլիկ» պարտվում է:

- Մարտուն Դադալյանը հաղթել է, Բաբայան Արտյոմը, Մելս Դադալյանը, Գոռ Դադալյանն, ուժեղ տղաներ են…

Իրենց ուժը ցուցադրում են Գորիսի տարածքային սպորտդպրոցի էրիկ Շահնազարյանի ըմբիշները, ասպարեզ են դուրս եկել նաեւ շամատիստները: Ու… Թել մանողները, խորոված անողները, ժանգյալով հաց թխողները, լավաշ հաց թխողները, իսկ զուռնա-դհոլի ձայնից բիբիլիական լեռները հորիզոնում ասես պար են բռնել եւ այդ պարով գովերգում են հայոց բարեբեր հողը, փառաբանում հայ ժողովրդին, որն իր ինքնությունը չի կորցնում ինչ խորշակի էլ որ հանդիպում է: Մարդկային լավատեսության, բարեսրտության կենարար զարկերակներով սնվող հողի վրա աճած այս թթենիներն ասես հայոց մշտավառ ապագայի, ներկա ու գալիք հաղթանակների լուռ վկաներն են, իսկ փառատոնն այս, որ արդեն ավանդույթի այցեքարտ ունի, խոսում է մեր ժողովրդի դարավոր հիշողությանն ու առաքելությանը տեր կանգնելու, մեր ապուպապերի սովորույթներին տեր դառնալու եւ այն սերնդեսերունդ փոխանցելու պատրաստակամության մասին:

Ու փառատոնն այս նաեւ բարոյական կատեգորիա է, որն իր աշխատանքի հիմքում դրել է Գորիսի համայնքապետարանը՝ համագործակցելով համապատասխան կազմակերպությունների հետ:

Հիմա էլ Գուսան Աշոտի երգերը թողած, կտրիճ Դավոյի մասին են երգում: Պարզվում է, որ դա ինքնանպատակ չէ. կտրիճ Դավոն նորափեսա Արան է, ով ամուսնանում է էլնայի հետ: Հաղորդավարը նրանց հրավիրում է հարսանեկան պարի: Եվ պարում են նորապսակները: Ու պարն այդ գին ունի՝ նվեր Գորիսի համայնքապետ Առուշ Առուշանյանի կողմից:

Թթի փառատոն, այսինքն նաեւ՝ թթի օղու թորում, դոշաբի պատրաստում, քյարխանայի լվացում եւ այդ ամենը՝ հերթով-հերթով:

Հերթով-հերթով էլ մանուկներն ու երիտասարդներն էշ են նստում. մեկ պտույտը՝ 500 դրամ: Էշն էլ լավ զարդարել են հնդկացի նորահարսի նման:

-Ինչքա՞ն փող ես աշխատել,- հարցը տալիս եմ ու նաեւ ինքս ինձ պատասխանում, իհարկե, բիզնես գաղտնիք է:

-Դեռ չեմ հաշվել…

Ինչպես ամեն միջոցառում, թթի փառատոնն էլ իր նպատակն ունի՝ Սյունիքի մարզը դարձնել Մետաքսի ճանապարհի մի մասնիկը, պահպանել հայկական ավանդույթները, մշակույթը, բարձրացնել մարզի ճանաչելիության մակարդակը, էկոտուրիզմով զբաղվողների ուշադրությունը հրավիրել Սյունիքի վրա եւ այլն:

Ավանդական դարձած թթի հերթական փառատոնը պատմություն դարձավ: Պատմություն դառնալով հանդերձ, այն դարձավ մի գեղեցիկ օրվա նկարագիր, որ լի էր բազում վայելքներով, հետաքրքիր պահերով, նոր ծանոթություններով, եւ հյուրասիրության ու արարման մասին մեր ընկալումը, նոր իմաստներով ու գույներով լցրեց: Եվ զուր չէր, որ գերմանուհին, թեւերը տարածելով, ասում էր՝ քեզ շատ եմ սիրում, հայ ժողովուրդ, դու, որ բիբիլիական ազգ ես, եւ առաջինն ես փարվել Քրիստոսին…

Ալվարդ Մեսրոպյան
Լուսանկարները՝ Լիլիա Լազրյանի

«Սյունյաց երկրի» արշավային այցերը Խնձորեսկի տարածաշրջանում

Լալազարի կամրջում

2019 թ. հունիսի 15-ին «Սյունյաց երկրի» ստեղծագործական խումբն այցելեց Սյունյաց աշխարհի արեւելյան սահմանագիծ, որտեղ գտնվում է 19-րդ դարի բացառիկ մի հուշարձան՝ Լալազարի կամուրջը:

Երկու կամարով այդ կամուրջն այսօր էլ չի կորցրել իր հմայքը եւ ամուր վիճակում է, սակայն 1980-ականների վերջին ազերի վանդալների կողմից զրկվել է արեւելահայաց պատի վրա քանդակված հայատառ վիմական արձանագրությունից, որը յուրօրինակ անձնագիրն էր հրաշալի այդ կոթողի:

Լալազարի կամուրջը հայոց ճարտարապետական մտքի փայլատակումներից է. կամրջի հեղինակի մասին հանգամանալից կխոսենք մեկ այլ առիթով:

Կամուրջը եւս մեկ վկայություն է առ այն, թե մեր նախնիներն ինչպիսի հոգածությամբ եւ արժանապատվությամբ են տեր կանգնել Սյունյաց տանը եւ շենացրել այն:

Լալազարի կամուրջ գնալու ճանապարհին մեզ ուղեկցում էր Որոտան գետը՝ անպատկերացնելի խորը կիրճերով ու կեռմաններով:

Եվ մենք հիշեցինք Համո Սահյանի տողերը.

Ոմանք հեգնում են, ոմանք ափսոսում,
Որ ես քո մասին հաճախ եմ խոսում,
Որ շառաչում եմ քո ջրերի հետ,
Հավիտյան ջահել իմ հայրենի գետ:
Հայոց բարձրաբերձ սարերից գալիս
Լույս դարձած՝ նորից սարերն ես գնում,
Դու անհիշելի դարերից գալիս,
Եվ դեպի գալիք դարերն ես գնում:
Որքան «նեղ» լինի ու որքան էլ «հին»
Ես նախանձում եմ քո ճանապարհին...

Իսկ կամրջի մատույցներում մեզ «ընդառաջ եկավ» մի համեստ հուշաքար՝ առավել համեստ հիշատակագրումով՝ **Մկրտչյան Արայիկ Անդրանիկի (1960-1992), Միրզոյան Մուշեղ Յուրիկի (1972-1992), Բաղդասարյան Կարեն Վազգենի (1971-1992), Մինասյան Կարեն Արծրունի (1968-1992):**

Գորիսեցի այդ երիտասարդները հենց այդտեղ էին անհավասար մարտի բռնվել ազերի հրոսակների հետ, որտեղ էլ նահատակվեցին հերոսաբար...

Այո, այդ տարածքում ամեն մի հողաթումբ քաջերի շիրիմ է, ամեն մի պտղունց հող՝ հայոց նվիրյալների արյամբ շաղախված, որը մոռանալ անկարելի է...



Ժայռափոր այս եկեղեցուն անուն առաջարկեցինք՝ Սուրբ Մարիամ

Հունիսի 23-ի օրը «Սյունյաց երկրի» ստեղծագործական խումբն այցելեց Հին Խնձորեսկից մոտ 10 կմ հարավ (դեպի Որոտան գետ) գտնվող ժայռափոր եկեղեցի:

Վաղնջական ժամանակներից այդ տարածքը եղել է Խնձորեսկի ձմեռանոցը. վայրը գյուղացիները կոչել եւ կոչում են Ուղլեցի:

Բայց ուշ միջնադարում այդտեղ բնակվեցին ազերի թուրքեր՝ վայրը կոչելով Ալիղուլիշաղ, ինչի մասին վկայում է նաեւ Ղեւոնդ Ալիշանը:

Ուղլեցիում ականատես եղանք անձեռակերտ երկու հսկա հուշարձանախմբի:

Առաջինն Ուղլեցու անկրկնելի ամրոցն էր:

Իսկ մի փոքր հարավ-արեւմուտք մեկ ուրիշ ամրոց է՝ անթիվ-անհամար քարանձավներով, որի ներքեւի մասում ժայռափոր եկեղեցին է՝ հողաշեն բեմով:

Ազերիները ժամանակին ջարդուփշուր են արել եկեղեցու եւ մերձակայքի խաչքարերը, որոնց բեկորները պահպանվում են:

Հենց եկեղեցում խորհուրդ արեցինք ու որոշեցինք անուն առաջարկել Աստծո մոռացված այդ տաճարին:

Եվ հեռախոսով առաջարկություն ներկայացրինք Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Մակար վարդապետ Հակոբյանին՝ ժայռափոր եկեղեցին կոչել Սուրբ Մարիամ, ով էլ բարեհաճությամբ հավանություն տվեց հավատավորներիս մտահղացումին՝ խոստանալով առաջիկայում այցելել մարդու ոտքի կարոտ, աղոթքի ու պատարագի կարոտ այդ եկեղեցի ու այնտեղ (դարերի լռությունից հետո) պատարագ կազմակերպել ու կատարել օծման եւ անվանակոչության արարողություն:

Աղջկա բերդի մասին՝ մեկ ուրիշ անգամ:

Ուղլեցու ժայռափոր եկեղեցի այցելեցինք Խնձորեսկ-Կուբաթլի ճանապարհով, Հարամի հարթավայրի վերջնամասից թեքվեցինք աջ ու ոչ անհայտ Թալակի ձորով իջանք նախ՝ Աղջկա բերդ, ապա՝ Ուղլեցի:

Թալակի ձորից դեպի Ուղլեցի ձգվող ճանապարհը, ինչպես պատմեց Ժորա Ալեքսանյանը, Արցախյան գոյակռվի օրերին մարտական գործողությունների վայր է եղել:

Այդ ճանապարհին է Սանասար Բեգլարյան դյուցազնի ջոկատը վրեժ լուծել ազերիներից այն բանի համար, որ նրանք Թալակի ձորում դաժանաբար սպանել էին մեր չորս հովվին:

... Իսկ ձորում այսօր անսովոր շոգ էր, մասրենին տեղ-տեղ կարմիր էր հագել արդեն, չնայած ոչ ոք այդ տարածքում վաղուց մասրենու կարմրելուն չի սպասում, ավելի ճիշտ՝ այդ տարածքները, թեեւ վերադարձել են Մայր հայրենիքի գիրկը, կարոտ են մարդու ոտքերի:

Ու, որքան էլ զարմանալի է, հասունացող մասրենու, վաղուց բանաստեղծականացված եւ մարդկային զգացողություններով իմաստ ու բովանդակություն ստացած մասրենու հետ զրույցի բռնվեցինք սահյանաբար.

«Պտուղդ քաղող չկա,
Մասրենի, սարի մասրենի,
Պատիվդ պահող չկա,
Մասրենի, բարի մասրենի:
Ասում են՝ թե մարդ չկա,
Որ փնտրի քնքշանքդ փշոտ,
Քեզ գրկի ու տաքանա,
Մասրենի, ժայռի մասրենի»:

Եվ, այդուհանդերձ, մասրենին մեր կողմերում չի փորձում «քաղաքակրթվել», չի աղավաղվում աշխարհի անհասկանալի անցուդարձի մեջ ու մնում է իր նախնական տեսքով՝ որպես Սյունյաց անզուգական քարափների հավերժական ուղեկից:

Առասպելական Աղջկա բերդում

Վերջին արշավը կոնկրետ առաքելություն ուներ՝ գտնել Աղջկա բերդը, որի տեղը հատուկենտ խնձորեսկցիներ գիտեն:

Դժվարին այդ խնդիրն իրականացնել կարողացանք հայրենի քարափների նվիրյալ Ժորա Ալեքսանյանի եւ Գրիշա Հարությունյանի աջակցությամբ:

Աղջկա բերդն ուրիշ անուններ էլ ունի՝ Կապույտ բերդ, Ղզղալա:

Աղջկա բերդը, ամենայն հավանականությամբ, այն ամրոցն է, որի մասին 19-րդ դարավերջին հիշատակում է Երվանդ Լալայանը Խնձորեսկում լինելուց եւ գյուղի ավագների պատմածը հիշելուց հետո:

Ահա՝ **«Գորիսից մոտ 8 կմ հեռավորությամբ դեպի արեւելք, քերծերի մի խումբ կղզիանում է Բյուլբյուլաձոր, Քըմըխտաձոր, Չըռչռոտ, Ճալաչավլուկ, Սըռնոցի ձոր, Պըռշնոտ ձորերով, իսկ քերծերի բոլոր լանջերին էլ բնակության համար քարանձավներ են փորված... Քերծերի ամենաբարձր գագաթին հնումը մի ամրոց է եղել, որի հետքերն են այժմ մնացել»:**

Դյուրին չէր Աղջկա բերդ հասնելը, մեկ-երկու անգամ նույնիսկ շփոթվեցինք ձորերում:

Այնտեղ գնացինք Հարամի հարթավայրով, ապա իջանք Թալակի ձոր եւ նորից իջանք, որից հետո թեքվեցինք ձախ:

Հսկայական այդ կիրճով մի գետակ է հոսում. դա Հին Խնձորեսկի 16 աղբյուրների ջրերի խառնուրդն է, որն անցնում է Աղջկա բերդի ստորոտով՝ հարավում միախառնվելով Որոտանին:

Աղջկա բերդը սովորական ամրոց չէ եւ չի տեղավորվում միջնադարյան բերդ-ամրոցների մասին դասական ձեւակերպումների եւ մեր պատկերացումների մեջ: Դա բնական, նաեւ ձեռակերտ ամրոցների մի ամբողջություն է, որի կենտրոնում՝ բարձրադիր վայրում (քերծերի գագաթին) միջնաբերդն է, որին էլ Աղջկա բերդ են անվանում:

Բերդ-ամրոցների արեւմտյան կողմն ուղղաձիգ եւ հսկայական ժայռ է, որը թույլ կապույտ գույն ունի: Մեր լուսանկարիչ Սոնա Արզումանյանը, ով գեղանկարչի մասնագիտությունը յուրացնելու ճանապարհին է, համաձայնեց մեզ հետ, որ բնության մեջ հազվադեպ հանդիպող այդ գույն-երեւույթի պատճառով է հավանաբար բերդը Կապույտ բերդ կոչվում նաեւ:

Բերդ-ամրոցների արեւելյան պատնեշը նույնպես ուղղաձիգ ժայռերի շղթա է, որի միջով, որքան էլ անհավատալի է, ջրանցք էր կառուցված կամ ոռոգիչ առու:

Իսկ կիրճում բազմաթիվ կառույցներ կան՝ քարանձավներ, թոնիրներ, պահոցներ, գաղտնարաններ, սառնարաններ...

Բուն միջնաբերդը հյուսիսային եւ հատկապես հարավային ու արեւմտյան մասերից անմատչելի է մարդու համար:

Միջնաբերդ կարելի է մտնել միայն հյուսիս-արեւելյան մասից, որն ամրացված է հաստ եւ ամրակուռ պատով (հղկված քարերով շարված ու առայսօր կանգուն):

Դիտարկելով բերդ-ամրոցների այդ համալիրի ամբողջական տարածքն ու կառուցվածքը՝ կարելի է ստույգ արձանագրել, որ Աղջկա բերդը դարեր շարունակ եղել է Սյունյաց աշխարհի Հաբանդ գավառի հարավ-արեւելյան դարպասը:

Դժվար թե որեւէ ասպատակ կարողանար հաղթահարել ամրոցների այդ շղթան եւ ներխուժեր Հաբանդ, ապա եւ Ծղուկ:

Իսկ վերջում...

Վերջում չէինք կարող որերորդ անգամ չխոնարհվել մեր սուրբ նախնիների հիշատակի առջեւ:

Որքա՜ն հզոր ու երկրաշեն են եղել, որքա՜ն նվիրյալ են եղել ու արժանապատիվ, որքա՜ն ամուր են կապված եղել իրենց բնօրրանեզերքի հետ, որքա՜ն բուռն ու անկեղծ են սիրել իրենց հողն ու ջուրը, որ նման ամրոցներ են կառուցել՝ հանուն հայոց լինելիության...

Հ.Գ

«Սյունյաց երկրի» արշավներն անհնարին կլիներ իրականացնել, եթե չլիներ մեր եզերքի նվիրյալներ Գրիշա Հարությունյանի եւ Ժորա Ալեքսանյանի աջակցությունը, որոնց երախտագիտություն ենք հայտնում:

Սամվել Ալեքսանյան
Լուսանկարները՝
Սոնա Արզումանյանի

Բորիս Մինասյանի անհատական ցուցահանդեսը

Հայաստանի ժամանակակից արվեստի թանգարանի Կապանի մասնաճյուղում հունիսի 28-ին բացվեց ՀՀ նկարիչների միության անդամ, գեղանկարիչ Բորիս Մինասյանի անհատական ցուցահանդեսը, որում ներկայացված էր արվեստագետի 34 ստեղծագործություն: Ցուցահանդեսի բացման խոսքում Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան պետթատրոնի գեղարվեստական ղեկավար Արթուր Գաբրիելյանը մասնավորապես ասաց, որ Բորիս Մինասյանը երեքտեղում է իր ստեղծագործական կյանքը. մեկ բան է լինել նկարիչ, մեկ այլ բան՝ գիտակ արվեստաբան, մի ուրիշ բան՝ մանկավարժ: Մանուկներին «տեղափոխել» գեղարվեստի աշխարհը, ճանաչել տալ կերպարվեստը, դա բնորոշ է հիմնավոր կրթություն ստացած անհատին, որպիսին Մինասյանն է, ինչը որակեց որպես Բորիկ Մինասյանի խոսքը՝ Աստծո հետ:

Արվեստաբան Սուսաննա Մարտիրոսյանը Բորիկ Մինասյանի տարեկիցն է, ուստի իր խոսքը կառուցեց այնպես, որ ներկայացվի գեղանկարչի ապրած միջավայրը, նաեւ այն արվեստագետներին, որոնցով շրջապատված է նա եւ ովքեր մասնակցում էին ցուցահանդեսի բացմանը՝ Ստեփան Դավթյան, Հրանտ Դանիելյան, Ռուբիկ Կոստանդյան, Լեռնիկ Առաքելյան եւ ուրիշներ: Ի հավելումն այս ամենի՝ Բորիս Մինասյանը նաեւ ստեղծագործում է, փորձում իր մտքերն արտահայտել չափածո խոսքով: Ս. Մարտիրոսյանը հարկ համարեց արտասանել գեղանկարչի «Ժառանգություն» բանաստեղծությունը:

Կապանի հոգեւոր հովիվ տեր Վահան Քահանա Հեբոյանը նշեց, որ Բորիս Մինասյանի կտավներում կարմիր թելի նման միշտ առկա են հավատքը, եկեղեցին: Մի տեղ եկեղեցին թեւեր առած՝ ճախրում է դեպի երկինք՝ որպես աղոթք, մի այլ կտավում Քրիստոսը բռնության ճիրաններից ազատագրում է մի ամբողջ ժողովրդի: Այս համատեքստում տեր Վահանը մեկնաբանեց «Այլակերպություն» կտավը:

Այնուհետեւ ներկաները ծանոթացան ցուցադրանքին: Իր գեղագիտական ընկալումներով Բորիս Մինասյանին առավել հոգեհարազատ է սիմվոլիզմը, եւ մեծավ մասամբ այդ մասին են վկայում գեղանկարների խորագրերը՝ «Պոռթկում», «Երաժշտությունից վեր», «Տեսիլք», «Երաժիշտը եւ մոդելը», «Դատաստան», «Այլակերպություն» եւ այլն: Կան գեղանկարներ, որոնք կոնկրետ մարդկանց են առնչվում՝ «Մինասի հիշատակին», «Փարաջանով», բայց դարձյալ դրանցում առկա են սիմվոլիստական տարրեր՝ երկփեղկված նուռ, ճաղավանդակներ: «Ընտանիք» նկարում բացակայում է տղամարդը, բայց տան գլխավորի սիմվոլը Խուստուփ սարն է…

Արվեստագետ Բորիս Մինասյանը ստեղծագործական աշխատանքը հաջողությամբ համատեղում է վարչականի հետ: Ավարտել է Երեւանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի գեղարվեստի բաժինը: 1987-ից Հայաստանի գեղագիտական դաստիարակության կենտրոնի Կապանի մասնաճյուղի տնօրենն է: 1987-ից մինչեւ այժմ Հայաստանի ժամանակակից արվեստի թանգարանի Կապանի մասնաճյուղի պատասխանատու է: 1986 թվականից դասավանդում է Կապանի արվեստի մանկական դպրոցում որպես կերպարվեստի ուսուցիչ: Նկարիչ-ձեւավորող է եղել Երեւանի պետական համալսարանում, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում, Կապանի մշակույթի պալատում, մասնակցել է Ջերմուկում կազմակերպված քանդակի հանրապետական սիմպոզիումին: Նրա «Արցախուհին» քանդակը տեղադրված է Կապանի հրապարակներից մեկում: ՀՀ գրողների միության կողմից տպագրված «Հրաշեկ լեռներ» անթոլոգիայում ներառված են նրա բանաստեղծությունները: Հեղինակ է «Ի սեր Աստծո» բանաստեղծական գրքույկի: Նրա գեղանկարչական աշխատանքները տեղ են գտել տարբեր երկրների մասնավոր հավաքածուներում: 2016 թ. ՀՀ նախագահի կողմից արժանացել է «Մովսես Խորենացի» մեդալի:

Ինչպես «Սյունյաց երկրին» փոխանցեց գեղանկարիչը, ցուցահանդեսում ներկայացված են 20-ից 35 տարեկանն ընդգրկող ժամանակահատվածում ստեղծված աշխատանքները, եւ նախատեսում է երեք փուլով ներկայացնել իր գործերը, հաջորդ տարի եւս մի ցուցահանդես կունենա:

Վահրամ Օրբելյան

Նախագահ Արմեն Սարգսյանը Սյունիքում

էջ 2

հնարավորությունների մասին եւ պատրաստակամություն հայտնել աջակցել նոր շուկաներ դուրս գալու հարցում:

«Սյունիքի մարզն ունի զարգացման մեծ ներուժ: Բացի հանքարդյունաբերությունից, այստեղ զարգանալու մեծ հնարավորություններ կան սննդի արտադրության, թեթեւ արդյունաբերության, զբոսաշրջության համար: Այնպես որ, դուք ճիշտ ուղղություն եք ընտրել»,- ասել է նա՝ առաջարկելով մեծացնել արտադրության ծավալները, նշելով, որ բնական, բարձրորակ, միջազգային ստանդարտներին համապատասխան արտադրանքը պահանջարկ ունի:

Նախագահ Սարգսյանի հաջորդ կանգառը եղել է «Մարիլա» ընկերությունը, որն ունի 55 աշխատակից, զբաղվում է կաթնամթերքի եւ մսամթերքի արտադրությամբ: Տնօրեն Հայկ Հակոբյանը հանրապետության նախագահին է ներկայացրել արտադրական հզորություններն ու հնարավորությունները, պատմել առաջիկա ծրագրերի մասին: Նա ընդգծել է, որ այս պահին միայն տեղական շուկայում գործունեություն ծավալող ընկերությունը մտադիր է ընդլայնվել: Նախագահ Արմեն Սարգսյանը նշել է, որ պատրաստ է աջակցել ընկերությանը՝ դուրս գալու արտաքին շուկա:

***

Սյունիքի մարզ աշխատանքային այցի ընթացքում հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանը հուլիսի 6-ին Քարահունջ համայնքում մասնակցել է թթի ամենամյա փառատոնին:

Նախագահ Սարգսյանը տարածքային կառավարման նախարար Սուրեն Պապիկյանի եւ մարզպետ Հունան Պողոսյանի հետ շրջել է մարզի համայնքները ներկայացնող տաղավարներով, համտեսել թթից պատրաստվող բարիքները, ծանոթացել սյունեցի արվեստագետների ու ժողովրդական վարպետների ստեղծած աշխատանքներին, զրուցել Թթի փառատոնի կազմակերպիչների, մասնակիցների ու փառատոնի հյուրերի հետ:

2014 թվականից կազմակերպվող միջոցառման նպատակն է նպաստել զբոսաշրջության զարգացմանը Սյունիքի մարզում:

***

Սյունիքի մարզ կատարած աշխատանքային այցի ավարտին Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանն այցելել է Գորիսի ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոն:

Ֆրանսահայ բժիշկ, սրտաբան, ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոնի հիմնադրամի տնօրեն եւ «Ակցիա առողջություն Ֆրանսիա-Հայաստան» ասոցիացիայի փոխնախագահ Ավետիս Մատիկյանի ուղեկցությամբ նախագահը շրջայց է կատարել բժշկական կենտրոնում, ծանոթացել պայմաններին, տեղեկացել մատուցվող ծառայություններին: Բարձրակարգ մասնագետներով ու ժամանակակից բուժսարքավորումներով հագեցած կենտրոնը սպասարկում է ոչ միայն Սյունյաց աշխարհի, այլեւ Արցախի, Վայոց ձորի սրտանոթային խնդիրներ ունեցող բնակիչներին:

Բուժհաստատությունը հիմնվել է 2013 թվականին, Ֆրանսիայի Բուշ դյու Ռոն նահանգի վարչական խորհրդի աջակցությամբ՝ «Ակցիա առողջություն Ֆրանսիա-Հայաստան» ասոցիացիայի կողմից: Կենտրոնի աշխատանքի շնորհիվ մինչ օրս ավելի քան 2000 կյանք է փրկվել:

Նախագահ Սարգսյանը շնորհակալություն է հայտնել Ավետիս Մատիկյանին, ում նախաձեռնությամբ է կառուցվել կենտրոնը, ինչպես նաեւ բուժանձնակազմին՝ նվիրված աշխատանքի համար: Նա բարձր է գնահատել բուժհաստատության դերը տարածաշրջանի բնակչության առողջության պահպանման գործում:

Մարզային այցի ավարտին նախագահը պատասխանել է նաեւ լրագրողների հարցերին՝ նշելով, որ ուրախ էր երկու օր անցկացնել մեր հայրենիքի հարավում, մի տարածքում, որն ունի եւ՝ պատմություն, եւ՝ հպարտանալու արժեքներ, եւ՝ մեծ ներուժ, սակայն այդ ներուժի մեծ մասը դեռեւս չի իրացվել:

president.am

Ծանուցում

«Զանգեզուր տեքստիլ» ՓԲԸ հրավիրում է բաժնետերերի խորհրդի արտահերթ ժողով, որը տեղի կունենա հուլիսի 15-ին, ժամը 16:00-ին:

Բաժնետերերին խնդրում ենք մասնակցել:

Հեռ. 077 67 47 77

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63,**
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ»
բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

QR կոդ

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 08.07.2019թ.: